# COVID-19 ԴԵՊՔ ԱՌԿԱ Է ԻՄ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ: Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԻՄԱՆԱՄ:

Ինչպիսին կլինի ուսուցումը ձեր երեխայի և իր դասարանի համար COVID-ի հետ կապված կարանտինի ժամանակ

**Իմ երեխան պետք է գտնվի կարանտինի մեջ** (սակայն ամբողջ դասարանը կարանտինի մեջ չէ).

- Կարանտինի մեջ գտնվող աշակերտները հնարավորություն ունեն մասնակցել բոլոր դասերին ուղիղ միացումով:



- Ուսուցիչներն առկա ձևաչափով կդասավանդեն կարանտինի մեջ չգտնվող աշակերտներին իրենց դասարանում:




- Հանձնարարությունները կկատարվեն դասարանի թվային հարթակի օգնությամբ:

**Իմ երեխայի ամբողջ դասարանը** (նաև միջին կամ ավագ դպրոցում) ստիպված է գտնվել կարանտինի մեջ.

- Նախադպրոցական և տարրական դասարանի աշակերտները հնարավորություն կունենան առցանց մասնակցել դասին իրենց ուսուցչի հետ ամեն օր առնվազն 3 ժամ:
- Միջին և ավագ դպրոցի աշակերտները հնարավորություն կունենան առցանց մասնակցել իրենց ուսուցչի հետ յուրաքանչյուր դասին առնվազն 30 րոպե տևողությամբ:

- Աշակերտները կկատարեն ինքնուրույն աշխատանք և կկարողանան մասնակցել խորհրդատվության ժամերին առկա ուսուցմանը չմասնակցելու դեպքում:




- Հանձնարարականները կկատարվեն դասարանի թվային հարթակի օգնությամբ:

**Կարանտինի մեջ գտնվող ուսուցիչները** (ովքեր հիվանդի հետ շփում են ունեցել կամ ախտանշանային են հիվանդացել) կշարունակեն աշխատել: Մեկուսացման մեջ գտնվողները (հիվանդները) բյուլետենի մեջ կլինեն.

- Այն աշակերտները, ում անհրաժեշտ չէ կարանտինի մեջ գտնվել, կայցելեն առկա դասերին փոխարինող ուսուցչի մոտ, ընդ որում և կարանտինի մեջ գտնվող ուսուցիչը, և փոխարինող ուսուցիչը կմասնակցեն ուսուցման ընթացքին:
- Կարանտինի մեջ գտնվող ուսուցիչները կդասավանդեն վիրտուալ ձևաչափով առկա սովորող և կարանտինի մեջ գտնվող աշակերտներին:



- Դասաժամերի ընթացքում ուսուցիչները օգտագործելու են խմբային աշխատանքի սենյակներ (Zoom) կարանտինի մեջ գտնվող աշակերտների փոքր խմբերին դասավանդելու համար:

- Հանձնարարականները կկատարվեն դասարանի թվային հարթակի օգնությամբ:

**Բացակայություններ**
Ի՞նչ է պետք իմանալ.

- Հարգելի բացակայություններ ունեցող աշակերտները կստանան ամբողջական կրեդիտ ցանկացած կատարված աշխատանքի համար, ինչպես դա լինում է ցանկացած հարգելի բացակայության դեպքում:



Եթե ձեր երեխան պետք է գտնվի կարանտինի կամ մեկուսացման մեջ, խնդրում ենք տեղեկացնել տնօրենին կամ դպրոցի անձնակազմին, թե արդյոք նա ցանկանում է շարունակել ստանալ ամենօրյա սնունդ: Դպրոցն կկազմակերպի, որ դուք կարողանաք վերցնել սնունդը աշակերտի կարանտինի ընթացքում:

Կարանտինի և մեկուսացման մասին լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք այցելել achieve.lausd.net/healthandsafety կայք: